ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2022 թվականի № ----Ա
ք. Երևան

«ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի N736-Ա և 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N771-Ա որոշումներով տրամադրված՝ համապատասխանաբար «Ձորագյուղ-1» և «Ձորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0307 և N0339 լիցենզիաների մասով 2021 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի ապրիլի 26-ին,

գ) Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0307 և N0339 լիցենզիաների մասով Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի մայիսի 25-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2022 թվականի մայիսի 24-ի №ԳԲ/34.4-Ղ4-2/1649-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) 2021 թվականի օգոստոսի 22-ից անբողոքարկելի դարձած՝ Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 9-ի №232-Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է Հաշվետվությունների ներկայացման ժամկետի խախտման համար,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0307 և N0339 լիցենզիաների մասով Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը, և առկա է այդ խախտման կրկնակիություն, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման տուգանք: Միաժամանակ, հաշվի առնելով, որ խախտումն առկա է Ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0307 և N0339 լիցենզիաների մասով, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման համապատասխան խախտման համար նախատեսված տուգանքի առավելագույն չափը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2022թ.